WIEN 62 BESTELLT 4.2.98 11-12 V

№ 1 (18) VIII ՏԱՐԻ 31 ՅՈՒՆԻՍ 1898

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

1897–98

18^95 եւ 96 թուականները ջարդերի տարիներ էին, որի ընթացքում տաճիկ կառավարութիւնն իր ամբողջ ուժը թափելով՝ այնպիսի սոսկալի դաս ուզեց տալ հայ ժողովրդին, որ սա՝ կատարելապէս ջարդուած՝ մի անդամ ընդ միշտ թողնի յեղափոխական ո՛րեւէ ձգտում։ Զմոռանանք, որ կառավարութիւնը գլուխ բերեց իր ծրագիրը դիւանագիտական ամէնաբարեյաջող հանգամանքներում. ո՛չ մի արտաքին ուժ չմիջամտեց, ոչ ոք չբռնեց դահճի ձեռքը. հայ ազգը մնացել էր միայնակ իր դահճի դիմաց եւ սա՝ բոլորովին սանձարձակ՝ թափեց իր ամէն գազանութիւնները։

1897 թուականը հետեւարար պիտի լինէր հաշուէկշռի տարի. նա պիտի պարզէր այդ գազանութիւնների եւ հրիւր հազարաւոր զոհերի առաջ բերած արդիւնքը, պիտի ցոյց տար, ուժ ունի արդեօք հայ ժողովուրդը շարունակելու իր սկսած ազատարար կռիւը, թէ օգոստ. 14-ի ճակատամարտը հոգեւարքի մէջ գտնուող զոհի ուժեղ, բայց վերջին ցնցումն էր եւ թէ հայ ժողովուրդը ջարդերից բոլորովին լքուած՝ ահ ու սարսափի մէջ իր դահճի առաջն է կծկելու ու նրա արիւնոտ ձեռները սրկարար լիզելու։

„Ծանր մուրճը եթէ փշրում է ապակին, բայց կռում կոփում է պողպատը", յիշում ենք բանաստեղծի միտքը։ 1897 թուականին հայ ժողովուրդը պիտի ցոյց տար, փշրուել է նա ապակու նման սուլթանի հարուածներից, թէ այդ հարուածները կռել-կոփել են հայութեան հոգին ու նրան պողպատի ամրութիւն տուել։

Տեսնենք ուրեմն, թէ ինչ էր ներկայացնում մեր յեղափոխական կեանքը 1897 թուականին։

Թերթելով յեղափոխական կոչուած արտասահմանեան բազմաթիւ հրատարակութիւնները, յիշելով տարուայ ընթացքում տեղի ունեցած երկպառակտումները, ընթերցողի կուրծքը սղմւում է այն անմխիթար, ճնշող եւ յաճախ զզուելի պատկերից, որ ներկայացնում են դրանցից շատերը։ Հոգու որպիսի՜ փոքրութիւն, որքա՜ն ստոր կրքեր, ցեխ, ապականութիւն . . .

Եթէ ճիշդ են հրապարակ հանուած բոլոր ամբաստանութիւնները,—դառն է, ողբալի։ Իսկ եթէ դրանց մեծ մասը հնարուած է, չարախօսութիւն, զրպարտութիւն, ստախօսութիւն է,— աւելի դառն, աւելի ողբալի դրութիւն . . . Ինչո՞ւ այդ ցեխերը հիմա են գոյանում, կամ այս ի՞նչ տաթօրինակ զւարճութիւն է՝ զրպարտել, չարախօսել, ցեխ վնտռել անպատճառ եւ գտնել մինչեւ իսկ այնտեղ, որտեղ չկայ։ Այս ի՞նչ հասարակական հիւանդութիւն է, որով վարակուած է մթնոլորտը։ Հիւանդութիւն ենք ասում, այլապէս երբէկայ համեստ գործիչին չէինք տեսնիլ ագահութեամբ ցեխ պտտողի դերում. յեղափոխականների միութեան ձգտողը չէր դիմիլ իր նպատակին նոյն յեղափոխականներին արատաւորելով. այլապէս կրակի ու քոցի մէջ երբեմն կռւող յեղափոխականը այսօր „մերկացնողի" փափուկ պաշտօնը չէր ստանձնիլ. հակայեղափոխական շարժումում ստեղծողները յեղափոխականներ չէին հռչակիլ եւ հասարակութիւնը՝ այնքերը փակած՝ միութիւն չէր պահանջիլ այդպիսիների հետ։

Ինչպէ՞ս առաջ եկաւ այս եղբայրասպան մթնոլորտը։ Մարդիկ քիչ առաջ աշխատում էին այնքի ընկնել մի լաւ բան կատարելով, այսօր ցեխեր պտտելով, նրանց տարածելով, նրանց հնարելով են պարծենում։ Քիչ առաջ ամէնասովորական մարդու մէջ դժեր էին որոնում՝ նրան հերոսացնելու. մի փոքրիկ յեղափոխական գործ ուռչում-փքւում էր բերանից բերան, այսօր անսովոր յամառութեամբ աշխատում են անտես անել, կամ նսեմացնել, կամ բոլորովին հակառակ գոյներով ներկայացնել յեղափոխական կեանքի խոշոր արտայայտութիւնները։

Եւ դրա փոխանակ, որպիսի՜ ագահութեամբ են յարձակւում յեղափոխութեան անմպաստ մի երեւոյթի վրայ, որպիսի՜ յափշտակութեամբ են խօսում, տպում եւ արտատպում . . .

Յեղափոխութիւնը, յեղափոխականները „քննադատութեան" են ենթարկւած։ Քննադատում են նրանց հին երդւեալ քննադատները, քննադատում են իրենք յեղափոխական կոչւածները, քննադատում է նրանց հասարակութիւնը. խօսում, վիճում, „մերկացնում" են . . .

Իսկ Գո՞րծը, յանուն որի երդւում են . . .

Հայութիւնը լքուած է, յեղափոխութիւնը մեռնում է . . . Մուրճի ծանր հարուածներից ապակին փշրուած է. եւ նրա բեկորներն իրար են խառնուած։ Ահա՜ այն անմխիթար, սպանիչ տպաւորութիւնը, որ ստանում է արտասահմանեան հայութեան կեանքը դիտողը։

Սուլթանը հասել է, ուրեմն, իր նպատակին . . .

—Ո՛չ. ամենայն համարձակութեամբ գոչում ենք մենք։ Լքումը նկատում ենք, ճիշդ է. բայց նա արտասահմանումն է եւ այն էլ մի որոշ մասի մէջ միայն։ Բացի այդ, նա ժամանակաւոր է եւ իր ամբողջութեամբ հետեւանք չէ յեղափոխական անաջողութեան, ինչպէս կարելի է ենթադրել։

Ապակու փշրանքները երկրից դուրս ենք տեսնում, իսկ այնտեղ, քիչ հեռո՛ւ, տանջանքների աշխարհում, ուր յեղափոխութիւնը պարապ ժամանակը զբաղցնելու խնդիր չէ եւ ոչ գրական վարժութիւնների ասպարէզ, մուրճի նոյն հարուածները պողպատ են կռել-կոփել, պողպատ, որի

ամրութիւնը այնպէ՛ս դառը կերպով զգայ Թշնամին։

Եթէ այստեղ գրիչ էին վերցնում իրենց սեւ հոգու արտադրութիւններով մթնոլորտն ապականելու, — այնտեղ դաշոյններ էին որում, հրացաններ յղկում՝ Թշնամուց վրէժը առնելու։ Եթէ այստեղ միութեան վսեմ գաղափարը իրենց անմաքուր բերաններն առած՝ ձգտում էին անմիութիւն առաջացնել, այնտեղ անձնական կրքերը մի կողմ թողած, ամէն կողմից, ամէն տեսակ մարդիկ, առանց փքուն ճառերի, մի սիրտ, մի հոգի դառած՝ եղբայրական քաղցր համբոյրներով Թշնամու վրայ էին սլանում...

* * *

Դեռ 96 թւականի վերջերում, Չարդերից անմիջապէս յետոյ, մի կողմից Բասենում, միւս կողմից Վան քաղաքում, Հայոց Ձորում, Ախոռկայ լեռներում տեղի ունեցած ֆէդայիների իրար յաջորդող յաղթական կռիւները փայլուն գրաւական էին հանդիսանում յեղափոխական շարժման կենսունակութեան, եւ մենք հաստատուն յոյսերով մուտք գործեցինք 1897 թւականը։ Եւ սա արդարացրեց մեր յոյսերը, տալով յեղափոխութեան աւելին, քան սպասում էինք, չնայած ներքին եւ արտաքին բազմաթիւ խոչընդոտներին, չնայած տիրող անտարբերութեան, մինչեւ իսկ յուսահատութեան, որ ուժեղացաւ Ցունասատանի պարտութիւնից յետոյ։ Եթէ Ցունասատանի նման մի ամբողջ պետութիւն գլուխ խոնարհեցրեց սուլթանի առաջ, հայկական շարժումը վաղուց ընկճած պիտի համարուէր յեղափոխութեան էութիւնը չհասկացողների կողմից։

Եւ համարում էին...

Դղրդաց սակայն յանկարծակի Խանասորի ձորը հարիւրաւոր մօսինների որոտից, դղրդաց նա ֆէդայիների դաշած սրտերից դուրս թռած վրէժինդրական մռնչիւններից, եւ հայ յեղափոխական դրօշակը յաղթական կերպով ծածանեց Արարատի սգաւոր բարձունքների վրայ։

Հարուածի ուժն անսպասելի էր,— պողպատը շատ էր կռած,— եւ կառավարութիւնը դեռ ուշքի չեկած՝ Խանասորի դղրդոցը արձագանգ տաւ Պոլսում կառավարութեան սրտի՝ Բ. Դրան պայթիւնով։ Մի անգամ եւս տեսան ու համոզուեցին, որ ամէն հալածանք, ամէն խստութիւն, զօրք, թնդանօթ անզօր են այն ուժի դիմաց, որ կոչւում է յեղափոխական անձնազոհութիւն. համոզուեցին, որ օգոստ. 14-ի հերոսական կռիւներից յետոյ, դինամիտը հաստատ բուն է դրել Պոլսի մէջ եւ դեռ եւս չի ասել իր վերջին խօսքը։

Ցիշենք այստեղ Խանասորի արշաւախմբի հետ համարեա միաժամանակ գաղտնի կերպով երկիր ներս մտած ֆէդայիների մի այլ խմբի յաջող կռիւը Սպահան լճակի մօտ, նրանց անարգել մուտքը Վան, անցեալի դառը փորձերից իրատւած կառավարութեան զգուշութիւնը, անդլիական հիւպատոսի միջամտութիւնը, խմբի քաղաքից անվնաս հեռանալը, նոր ընդհարումը քրդերի հետ։ Ցիշենք նոյնպէս Աղբիւրի ու իր խմբի վարած կռիւները քիւրդ աւազակների դէմ, Վանում, Բաղէշում ու իր շրջակայքում կատարւած յաջող ռէոորական գործողութիւնները։

Այսպէս, հայ ժողովուրդը, չմոռանանք՝ ջարդւած, անօթի, մերկ ժողովուրդը, պատւով եւ հոգու անսպասելի ամրութեամբ անցկացրեց 1897 թւականը, որ կրիտիկական պիտի համարել նրա վիճակի համար։ Եւ այդ թւականի յեղափոխական շարժումները ո՛չ միայն փառաւոր ապացոյցներ էին, որ ոչ մի բռնի ֆիզիքական ուժ չի կարող հայ ժողովրդին բարոյապէս ընկճել, այլեւ այդ շարժումները պիտի փարատէին այն անմիտ վախը, որ պատել էր շատ շատերին։ Կոտորածից շշմածները ամէն մի ընդհարումից յետոյ սպասում էին անմիջական կոտորածի, չէին հասկանում, որ կոտորածների անմիջական պատճառները մասնակի շարժումները չեն։ Եւ այդ կոտորածների հաւանականութեան հիման վրայ չէին դադարում դատապարտել մեր բոլոր շարժումները, չնայած, որ իրենց գուշակութիւնները երբեք չէին կատարւում, չնայած, որ կոտորած տեղի չունեցաւ ո՛չ Բասենում, ո՛չ Վան քաղաքի մէջ, ուր երկու օր անընդհատ կռիւ էր մղում թնդանօթների դէմ, ո՛չ Բաղէշում, ո՛չ Պոլսում Բ. Դրան պայթիւնից յետոյ եւ ո՛չ Վասպուրականում Խանասորի կռիւի պատճառով, այլ Թոքատում, ուր ոչ ոք չէր մասնակցում ո՛րեւէ շարժման մասին։

Եւ ոչ միայն կռիւ եղած վայրերում կոտորած տեղի չունեցաւ, այլ եւ մի քանի տեղ մահմեդական տարրը հայերի բարեկամութիւն սկսեց փնտռել։

Հայ ժողովուրդը անցաւ փորձութեան բովով, մնաց՝ ու հոգով մաքրւած, փա՛ռք նրան... Ապագան պարզ է, եւ մենք աւելի մեծ յոյսերով ոտն ենք դնում 1898 թւականը։

Թո՛ղ դեռ վիտան ժողովրդի դատի գիտակցական եւ անգիտակից դաւաճանները, թո՛ղ պղտորեն հասարակութեան մտքերը եւ իրենց օրինակով վնասատուութիւն տիրեն.

Թող ցնծա՛ն մեր էֆէնդիները, ցնծան Աշգեանները, որ սկսել են իդեալ դառնալ մի շարք յեղափոխականների համար։

Թո՛ղ մթնոլորտը խառնւած լինի. շշմած հասարակութիւնը դեռ չարտնակի խարխափել մառախուղի մէջ, առանց կարողանալու տեսը սպիտակից ջոկել, թո՛ղ քարեր շպրտեն նահատակ ընկերների յիշատակին... փոյթ չէ, ընկերնե՛ր. վստահ մեր ընտրած ճանապարհի ճշմարտութեան վրայ, կրկնապատկենք մեր եռանդը եւ թոյլ չտանք երբեք, որ խոնարհւի մեր բարձրացրած դրօշակը, որի յաղթական ծածանումից սիրտ ունեցան այնքա՛ն շամիրած սրտեր։

Դեռ մնում են Մայր-Հայրենիքի աւերակները, դեռ հեծկլտում են սգաւոր մայրերը,— եւ քանի այդ դժոխքը տիրում է, վրէժինդրութեամբ լի կարիճների օգնութեան գոչերը չեն դադարիլ ձեր ականջին հնչելուց, հայրենիքից դուրս գտնւող մատաղ ու զգայուն սրտե՛ր... սեղմեե՛նք իրար աւելի, կաւելնք կուռ շարքերով, եւ վերջ կըստանայ ժամանակաւորապէս տիրող լքումը։

Խանասորի կռւով նոր, յաղթական շրջան է բացւում։ Մենք ցոյց տուինք Թշնամուն, որ մեզ չի պակասում ո՛չ անձնազոհութիւն եւ ո՛չ ռազմական հնարագիտութիւն,— հնարամտենք Թշնամու աչքում, մեր սրտակից ընկերների արեան գնով ձեռք բերած յեղափոխական մեր դիրքը։

Պողպատը կռած-կոփած է սուլթանական մուրճի հարւածներից. մեզանից է կախւած պատրաստել նրանից այն սուրը, որ վերջ ի վերջոյ պիտի կտրի մուրճը բռնած ձեռքը։

—o—

Տարին ծանր էր իր պատճառած կորուստներով։

Դեռ անցեալ ձմեռւայ սկզբին կորցրինք Վանի կրա-

ում կարճկանցի Գրիգորին, Հայոց Զորում՝ վանեցի Դաւթին, զարալաղցի Խէչօյին եւ Նիկոլային։ Դեկտ. 28-ին անձնասպանութեամբ վերջ տուեց իր կեանքին դժբախտ օր. Մարմն։ Եգիպտոսում իր փոթորկալից կեանքը վերջացրեց Պոլսի մեր կազմակերպութեան սիւներից մէկը՝ Արտաշէս Դեւեանը։ Նոյնպէս Եգիպտոսում, տարաբայ վերջին թոքախտից հանգաւ Արիանեանի խմբի անդամ Նշան Քէշիշեանը։ Կիպրոսում ժանտատենդից մեռաւ Շահէն-Ցարհատը, որ նոր էր մըղում կուի դաշտը։ Պոլսում Կալաթա-Սէրայի առաջ զոհուեցան Ս. Մեռնակ Ճանիկեան՝ ակնցի եւ Կարապետ Մաղաքեան՝ արմտանցի. իր բնակարանի մէջ ինքնասպանութեամբ նահատակուեց Տրապիզոնցի Յակոբ Դարակէօզեանը։ Իսկ Խանասորի հերոսների յիշատակը դեռ թարմ է ընթերցողների սրտում։

Մռայլ, տանջուած դէմքերով կամ պաշեան փրփուրը բերաններիդ՝ պատկերացած էք մեր առաջ, գնտակախոտրով կամ մահուան անկողինը անիծող, ծանօթ ու անծանօթ ընկերնե՜ր։ Ձեր քաղցր, անջնջելի յիշատակի առաջ լցուում են մեր սրտերը . . . Բայց հեռո՜ւ արցունքներ,— այդ չէք պահանջում դուք մեզանից։ Ձեր սրտի ցաւը թշնամու արիւնով ամոքեցիք. նոյնն էք սպասում կենդանի մնացածներից . . .

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

12/24 Նոյ. 97

Բնութիւնը վերջապէս իր անսահման ողորմութիւնով սարսռահար սրտերը հանդարտեցուց։ Երկու շաբաթէն աւելի է Վասպուրականը ծածկուած է թանձր ձիւնով։ Ճիշդ է որ մերկ ու անօթի հայ ժողովրդի համար անտանելի է ատ. ո՞ր պիտի պատսպարի հիմա. տաքուկ սիրուներ չկան, վառելիք չկայ, հանդերձեղէն չկայ, պատառոտած քուրջի կտորները հազագիւտ, ապրուստի միջոցները իսպառ գոցուած՝ աշխատանք չըլլալուն։ Ու հայ ժողովուրդը պիտի ապրի — անշուշտ հրաշքով— ինչպէս ապրեցաւ անցեալ ձմեռ։

Վաղահաս ձիւնը, սակայն, շատերու համար սփոփանք եղաւ։ Ամէնէն առաջ ուրախացաւ տաճիկ կառավարութիւնը որ հապճեպով սկսաւ զօրքերը սահմանագլխէն ետ կանչել ու իրենց տեղերը ճամբել դէպի ներսերը։ Խումբ-խումբ ճամբայ կը հանեն քաղաքէն։ Ամէնու բերնէն անէծք ու հայհոյանք կը թափի իրենց փատիշահի գլխուն, որու ձեռքին այսպէս գերի դարձած՝ շանօր կը քաշեն։ 3-4,000 զինուոր միայն մնալու են Վասպուրականի մէջ, որովհետև կասկածնին փարատած է հիմա, պարսիկ կառավարութեան վերջերս բռնած ընթացքին հետևանօք։

Տաճիկ կառավարութենէն թերևս աւելի շատ ուրախացան սահմանագլխի քիւրդերը, որոնց դողահար սիրտերը, հակառակ իրենց ձեռք առած զգուշութեան ամէն տեսակ միջոցներուն, տակաւին չէին հանդարտած։ Ամէն քիւրդ աղա իր գեղին մէջ կը պահէ պատրաստ ձիաւորներ, որոնք գիշերը մինչև լոյս կը պտրտին ու կը հսկեն պոռալով ու կանչըռտելով։

Թ. ակուրցոց Հիւսէին աղան իր գեղին մօտիկ դիրքեր շինել տուած է և միշտ պատրաստ մարդիկ կը պահէ անոնց մէջ։ Նոյնն ըրած են նաև սահմանագլխի քիւրդերը՝ Մլանցիք, Շամսկցիք։

Բայց ինչ որ ալ ընեն զուր է։ Իրաւ որ անրուժելի եղած է սարսափը։

Նոյն վիճակին մէջ են նաև Վասպուրականի ներսերն ապրող քիւրդերը։ Գեդայիի հոչակը ահաբեկած է ամէնքն ալ . .

Հապա Շարաֆը ի՞նչ օրեր կ'անցնէ արդեօք և ի՞նչ կը խորհի. . . *)

—o—

19/1 դեկտ. 97

Քաղաքին մէջ ընդհանուր լռութիւն կը տիրէ գրեթէ։ Լուռ են յեղափոխականները, լուռ է կառավարութիւնը, լուռ են մեր աղա-ջոջերը։ Առաջնորդական տեղապահ Արսէն վարդապետը պաշտօնանկ ըլլալով Աղթամար քաշուած է, բազմելու թափուր մնացած կաթուղիկոսական աթոռին վրայ։ Ափսո՜ս, գուցէ հոն դժուարանայ իր շուրջը պահել հուրիներու խումբը, ինչ որ սովոր էր ընել առաջնորդական աթոռի վրայ եղած ժամանակը։ Բայց նոյն եղն է՝ վեղարին տակը ծածկած կոտոշները և անասնական գործերը։ Աղա-ջոջերը մինակ չկան հոն իր շուրջը, բացի մէկէն, որմէ թերևս մահով միայն բաժնուի։ Հայրսուրբի ամենասիրելի. . . խորհրդատուն է ատ, բացարձակ տէրը, որ մեծ էշի մը չափ իմաստութիւն ունի։

Հայրսո՛ւրբ մինչև որ կաթուղիկոսին հարստութիւնը սպառեցիր՝ հոգիդ դուրս եկաւ, չենք գիտեր ինչպէս մարսելու ես. խորհուրդ կուտանք քեզ Պոլիս երթալ թէ յեղափոխականներու ձեռքէն կ'ազատիս (*) և թէ փնտռածներդ քեզ կը գտնեն հոն։ Գնա, և Էշէգեանի ու Օրմանեանի հետ գլուխ գլխի տուէք դարման մը գտնելու ձեր ողորմելի վիճակին. . . գուցէ օգնողներ գտնուին ձեզ։

Նորընտիր առաջնորդական տեղապահ Ստեփան վարդապետը՝ միակ աչքի զարնող հոգևորականն է Վասպուրականի մէջ. թէև պաշտօնի անցնելէն իվեր իր գոյնը որոշ ցոյց տուած չէ, սակայն, անպայման կ'ընդունինք որ Արսէն վարդապետէն բարձր է, կըսպասենք գործը ցոյց տայ։ Կեղտոտ աղաները սկսած են մօտիկնալ և կը փորձեն իրենց ձեռքն անցնել վարդապետին և առաջնորդարանի ղեկը, տեսնենք ի՞նչ աստիճան պիտի յաջողին։ Ի՞նչ օգուտ, Աղթամարի գանձը չկայ մէջտեղը։ Ձիւնը հանգստութիւն պարգևեց և մեր էշ աղաներուն, որոնք, համոզուած ըլլալով որ՝ դրսէն այլևս մարդ ներս մտնել չէ կարող (*), ներսիններուն հետ այսպէս թէ այնպէս պիտի յաջողին յարմարիլ մինչև գարուն։

Բանտարկեալները ահագին թիւով կը մնան տակաւին. քննութիւնները շատ դանդաղ կը կատարուին. շատերը երբեք քննուած չեն։ Բարեբախտաբար, կարգ մը հարուստներ ալ կան բանտարկուած, որոնց հացի փեշրանքներով կ'ապրին շատ մը թշուառ ու անտէր բանտարկեալներ։

* Վանի մեր ընկերներու լսածին համաձայն Շարաֆը ըսպասնուած չէ Խանասորի կուի մէջ, այլ վիրաւորելով՝ մազապուրծ ազատած է կուի դաշտէն։

Բաղէշի կողմէն խստութիւններու ձայներ կը լսուին. ձերբակալութիւններ, խուզարկութիւններ, կապուտ կողպուտ ելն։ Բնականաբար, միշտ անմեղ, անտարբեր մարդիկներ են մէջտեղ զոհուողները։

Թէթև ընդհարում մը տեղի ունեցած է հոն՝ հոկտեմբերի սկիզբները։ Խումբ մը, որ 2-3 հրացանով ճամբայ ելած էր որոշուած տեղ մը գնալու համար, Փրխուս գեղի մէջ կը մատնուի նոյն տեղի յայտնի մատնիչէ մը, որ հեռու տեղերէ իր հայրենիքը՝ Խլաթ, վերադարձած էր յատկապէս Աղբիւրը կառավարութեան յանձնելու համար։ Մինչև հիմա կը դիտուէր այդ կեղտոտ հայու բռնելիք ընթացքը դէպի Աղբիւրը և դէպի յեղափոխութիւնը։ Ահա մարդը գործով ցոյց տուաւ, որ հաւատարիմ է իր կոչման։

Խումբի մէջ Աղբիւրը չկար, անոր ընկերներն էին։ Վրայ կը թափուին հանանցի քիւրդերը և Խլաթի ոստիկանները։ Կըսկսի կռիւը՝ իրիկուան մութին։ Թշնամին քանի մը ձիերը սատկելով՝ քիւրդերն ու ոստիկանները կծիկը կը դնեն և տղաքը բոլորովին անվնաս կ՚ազատին։ Կըսկսի խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ գեղերու մէջ։ Քանի մը հոգի ալ Կարճկանի գեղերէն կը բռնեն. մէկ մանը Բաղէշի, միւսը Վանի բանտը կը տարուին։

Փառք Աստուծոյ. բանտերը լեցուած են ամէն տեղ։ Սուլթանին կը մնայ օր առաջ արձակել ընդհանուր ներումին իրատէն, քանի չէ սպառած բանտարկեալներուն տուած չոր հացը։

Միւսիւլման ժողովուրդը սկսած է իրեն համար նոր բարեկամներ պատրաստել, ուխտ ընել, դաշինք կապել որ վտանգի ժամանակ փոխադարձաբար մէկմէկու պաշտպանեն։ Անոնք, որ կոտորածի ժամանակ շատ չարիք գործած են՝ անոնք ամէնէն շատ կը սոսկան։ Հայը չի հաւատար անոնց ոչ խոստումին և ոչ դաշինքին։

Ու այսպէս, վեց երկար ամիսներ հայ ֆէդայիին տուներու մէջ փակուած պիտի անցընէ իր օրերը երազներով ու ենթադրութիւններով՝ մինչև հասնի գարնան աւետարեր ծիծեռնակը և վերջ դնէ ֆէդայիի հոգեմաշ վիճակին...

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ԻՐ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

I

ՀԷԼԼԷՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Տարի մըն ալ անցաւ այդ դժբախտ երկրին վրայէն, որ Թիւրքիա կը կոչուի, սովորական կերպով միշտ չարագուշակ տարիներէն մէկը, հարուստ ոչ թէ այն անցքերով, որոնք այդպիսի բազմատարր պետութեան մը բարգաւաճմանը նոր թռիչ մը կուգան տալու, բարօրութեան տոկոսն աւելցնելով և աւելի սերտիւ պնդելով այն կապերը, որոնք անհրաժեշտաբար կը միացնեն պետութիւնը կազմող բազմազան տարրերը։ Ընդհակառակը։ 97-ն ալ եկաւ անողոք խստութեամբ մը շարունակելու իր նախորդներուն պատմական գործը — ցնցում և աւեր բերաւ այդ խարխուլ կազմուածքին, որ ինքը անզօր այլևս ապրելու, կեանքը կը խափանէ և այն սաղմերուն, որ այդ կազմուածքին մահվը լոյս-աշխարհ պիտի տեսնեն իրենց սեփական կեանքն սկսելու...

Ոմանք կարծեցին թէ 97-ը նշանաւոր թուական մը կը բանայ Թիւրքիոյ ժամանակակից պատմութեան մէջ։ Հէլլէն սակաւաթիւ, բայց քաջամարտիկ զօրքը ջախջախելու համար իր ըրած գերագոյն ճիգերուն մէջ ապացոյցներ տեսնել ուզեցին օսմանցիներու նախկին զինուորական ուժին վերածնումին, սուլթաններու պետութեան կենսունակութեանը։ Եւ Հէլլադայի մարմնէն ճանկուած արիւնոտ կտորը, սահմաններու սրբագրութեան այդ արդիւնքը, սկսող աշխարհակալ մակընթացութեան մը առաջին քայլը։

Կը բաւէ սակայն քիչ մը կանգ առնել այդ իրողութիւններուն առջև, աւելի խորին ու բազմակողմ դիտողութեան մը ենթարկել, համոզուելու համար թէ որքան խաբուսիկ են բոլոր այդ երևոյթները։ Սուլէյմաններու, Բայազիտներու և Մահմուտներու ստեղծած այդ հըսկայ մարմինը, իր վերջին ուժերը լարելու հարկադրուեցաւ ափ մը հէլլէն բանակին, իր երէկուան հպատակներուն, դիմադրելու համար։ Կռիւի առաջին օրերը յաղթանակի հաւանականութիւններն այնքան քիչցան, հակառակ գերման սպաներու ներշնչած բոլոր վստահութեանը, որ Օսման փաշայի ներկայութիւնը միակ դարմանը համարուեցաւ, Էթհէմ փաշայի բանակին հոգեկան լքումը փարատելու համար...

Ծաղը կրնայ միայն շարժել այդ ողորմելի յաղթութիւնը։ Փոքր Հէլլադան մէն մինակ կեցած եռապատիկ բազմաթիւ և կուի վարժ բանակի մը առջև, որուն իսկական հրամանատարն է գերման սպայակոյտը, և որուն զօրավիգ կը հանդիսանան եւրոպական մեծ տէրութիւնները, ոտնակոխ ընելով միջազգային իրաւունքի ամէնէն տարրական պահանջները։

Ի՞նչ տարբեր տեսարանի մը ականատես պիտի ըլլայինք, եթէ հէլլէն բանակը դրանիկներ չունենար իբր պետ, և եթէ հէլլէն նաւատորմիղը իր առեղծուածային անգործութիւնը չպոտցներ Պրէվէզայի և Վլօրայի առջև։

Թիւրքիան ոչ միայն չյաղթեց, այլ այդ պատերազմով ցոյց տուաւ թէ ի՞նչ արժեն իր բոլոր սպաները և այն համբաւաւոր տոկունութիւնը, մահուան այն անգիտակից դիմագրաւումը, որ իբր ունի թիւրք զինուորը շնորհիւ ճակատագրի հաւատքին։

Այդ ուժան յաղթանակը երկրին վաճառականութեան համար աղետաբեր հետևանքներ ունեցաւ, իսկ իբր տուգանք առնելիք քանի մը միլիօնները թերևս չբաւեն իսկ պատերազմական ծախքերը գոցելու։

Պատերազմը ոչ միայն չհասաւ իր նպատակին, այլ միայն ժխտական հետևանք ունեցաւ օսմանցիներուն համար։ Եթէ Կրէտէն ձեռքէ չհանել էր այդ կուին նպատակը — բայց Կրէտէն անդարձ կորսուած է այլևս սուլթաններուն համար։ Եթէ հէլլէնականութիւնը ջախջախելն էր, Փարսալի կռիւը Սէտան մը չեղաւ, բայց Թէսալիայէն խլած այդ կտորը նոր Ալզաս մը պիտի ըլլայ. և վրէժի սևեռուն գաղափարը կամուրջ մը պիտի հաստատէ Թիւրքիոյ յոյները միացնելու բոլոր այն ցեղերուն, որոնք սուլթաններու Աուստրիաֆէն պիտի պատրաստեն մօտիկ ապագայի մը համար...

* * *

Վերջացող տարեան լաւագոյն էջերէն մէկը կը մնայ այդ պատերազմը, երբ դարերով տանջուած քոյր կղզիին դերութեանը վերջ մը դնելու վեհ խանդավառութեամբ շարժեցաւ ամբողջ հելլէնական աշխարհը։ Երբ չը խնայեցաւ ոչ դրամ, ոչ կեանք. երբ հելլէնը ասպարէզ եկաւ 1828-ի աւանդութիւններով, դաս մը տալու Եւրոպային, որ այնքան շուտ մոռցաւ դարուս առաջին կէսին իր դաւանած սկզբունքները ու կատարած գործերը։ Որքա՜ն վսեմ, որքան ոգեւորիչ կը պատկերանայ մեր առջև հելլէն հայրենասիրութեան այդ պոռթկումը, նոյնքան ցաւալի հակապատկեր մը կը ներկայացնեն այդ ազգի ճակատագիրը վարող քաղաքական շրջանակներու ապիկարութիւնն ու կարճատեսութիւնը։ Հելլէնը գաւ ինչ որ կ'ուզէին իրմէ. իր քսակն ու իր կեանքը. իր վարիչները, իրենց ունայնամիտ ու սնափառ պայքարներուն մէջ, ժողովրդին իրական շահերը չըմբռնեցին, անհոգ գտնուեցան բանակն ու նաւատորմիղը իրենց կոչման բարձրութեան վրայ պահելու. երբ մանաւանդ իրենց քաղաքականութիւնը վաղ կամ ուշ ճակատ ճակատի պիտի բերէր հայրենիքը իրենց երբեմնի բռնակալին հետ։ Յունական գոռոզութիւնը թերևս պատճառներէն մէկն ըլլայ այդ անհոգ վերաբերումին, բայց Պէրիկլէսի դարը շատոնց անցած է, և „բարբարոսներու“ խառնիճաղանճ ամբոխը չէ որ նետերով ու աղեղներով զինուած Մարաթօն պիտի դիմէ։ Գահաժառանգը երբ Լարիսա կուգայ մարտ 29-ին, կատարեալ խառնակ վիճակի մը մէջ կը գտնէ բանակը. ոչ պահեստի զօրք կար, ոչ բանակի պիտոյքները հոգացող մարմին մը, ոչ փոխադրութեան միջոցներ, ոչ հիւանդակիր կառքեր, հեծելազօրը առանց ձիու, հրետանիներուն կը պակսէր մթերակիր սայլեր, իսկ ամբողջ բանակը կատարելապէս զուրկ վրաններէ։ Դէլիանիսի կառավարութիւնը, ինչպէս հաստատել կը ջանայ Կոստանդին իշխանը, ոչ յատակագիծ մը պատրաստած էր պատերազմին համար, ոչ պահեստի զօրք պատրաստելու խորհած, ոչ իսկ փորձած ապահովելու նաւատորմիղին զուգընթաց գործակցութիւնը բանակին հետ։ Նախարարութեան ամբողջ հոգն եղած էր „պաշտպանողական դիրք բռնել“ հրամայել, մնացածը դիպուածին թողլով։

Մօտիկ ապագան պիտի պարզէ անշուշտ այդ դաւաճան անհոգութեան բոլոր հեղինակները. բայց դժուար չէ այժմէն իսկ ըսել որ պատմութեան երկաթի ձեռքը պիտի խարէ կարգ մը պետերու ճակատը, քաղաքական թէ զինուորական, որոնք պատասխանատու պիտի մնան ոչ միայն իրենց հայրենիքին, այլև մարդկութեան առջև, արդարութեան գործ մը վիժել տալերնուն համար։

Պարտութեան առաջին օրն իսկ պէտք էր գտնել քաւութեան նոխազը, և ահա սկսան դատափետել Էթնիքի Էթէրիան, որ իր միթինկներով, իր յորդորներովը գրգռած էր հասարակաց կարծիքը և իր մարտական խումբերով ասպատակած Մակէդոնիան ու հարկադրած Թիւրքիան պատերազմ յայտարարելու Յունաստանի դէմ։ Բայց Է. Էթէրիան մեկուսի մարմին մը չէր. համալսարանը, ֆինանսական աշխարհը, խորհրդարանն ու նախարարութիւնը, վերջապէս բանակն իրենց ներկայացուցիչներն ունէին հոն։ Դժուար է ենթադրել, որ ընկերութիւնը տարբեր ու անջատ քաղաքականութիւն մը ունենար օրուան դահլիճէն։ Էթէրիայի վերջերս ըրած մերկացուցիչ յայտնութիւնները պարզեցին, որ ընկերութիւնը իր պետերուն շնորհիւ և միջոցաւ գործիք մը եղած էր Դելիանիսի ձեռքը։ Արժանահաւատ բարեկամ մը կը հաղորդէ մեզ Ա.Թէնքէն, թէ Էթէրիան իր Հոկտ.-ի նիստերէն մէկուն մէջ, ազգային անյաջողութեան մէկ մասը վերագրած է իր կազմակերպութեան կեդրոնացուցիչ դրութեանը և որոշած է ապագային ապակեդրոն սիստէմով գործել։ Ցաւալի է, որ այդպիսի դառն փորձի մը պէտք ունեցաւ Էթէրիան, համոզելու համար, թէ որքա՜ն աղետաբեր է այդ տեսակ գործերու ամբողջ պատասխանատուութիւնը և ղեկը դնել կեդրոնի մը ձեռքը, եթէ նոյն իսկ այնպիսի „խելացի“, „պատուաւոր“ տարրերէ կազմուած ըլլայ, ինչպէս Էթէրիայինն էր։

Սպասելով այն օրին, երբ իր պարտութեան բոլոր պատճառները մեզ բացատրէ Էթէրիան, — բան մը, որ շատ դասեր կրնայ պարունակել մեզ համար, — այժմէն կարելի է մատնանիշ ընել այդ ձախող պատերազմին գահավէժ սկզբնաւորութիւնը։ Բուլղարներու փայլուն յաջողութիւնները Մակէդոնիոյ մէջ — չխօսելով բուլղար ժողովրդի և պետութեան արագ առաջդիմութեան մասին — կսկծեցուցիչ մտատանջութիւն մը սկսած էին պատճառել հելլէններուն, որոնք տակաւին ազատուած չեն ֆանարիոտներու երբեմնի անուրջներէն, ջախջախելու հելլէնականութեան բազուկին տակ Բալկաններու բոլոր ազգութիւնները, ձուլելու ատոնք իրենց հետ, բիւզանդական կայսրութիւնը վերականգնելու համար։

Վաղուց արդէն յոյն քաղաքական շրջանակներուն մէջ կը տիրէր ձգտում մը տիրելու Մակէդոնիային, — ուր աննշան թիւ մը կը կազմեն սակայն յոյները — խեղդելու համար տեղական բուլղար ժողովրդի վերածնութեան ջանքերը և կռուան մը պատրաստելու հելլէնականութեան, Բալկաններու մէջ իրենց անդրագոյն առաջխաղացումին համար։ Դարերու երկար փորձ մը, սկսելով այն օրէն երբ բալկանեան թերակղզին ինկաւ բիւզանդական կայսրութեան ներքև, ցոյց տուաւ որ յոյները անընդունակ են, ձուլելու իրենց ազդեցութեան ներքև գտնուող ազգերը այն միջոցներով, որ միակ ներելին է՝ քաղաքակրթութեան։ Անցեալի մղձաւանջը մոլորեցուց զիրենք. մինչ մէկ կողմէն օտարներուն մէջ „բարբարոսներ“ շարունակեցին տեսնել, մոռցան որ իրենք ալ Արիստոտէլի և Պղատոնի յաջորդները չէին, այլ ժառանգորդները միայն։ Ձուլելու քաղաքականութիւնը չյաջողեցաւ, բայց բալկանեան սլաւ և ռումէն ցեղերը, Փոքր-Ասիոյ հայերը իրենց թշնամիները ըրին։

Կրէտական խնդիրը պատրուակ մը կ'ընծայէր, առիթ մըն էր, ուրկէ ուզեցին օգտուիլ յոյն քաղաքական շրջանակները, առանց խորհելու և չափելու այդ քայլին հետևանքները։

Գաղափարի կռիւը որ իրենց նշանաբան ընտրած են յոյն հայրենասէրները իր այդ ժխտական երեսն ունի, որ զուանքով կը հեռացնէ գաղափարի ճշմարիտ բարեկամները։ Եթէ համակրանքի ու յարգանքի խորին զգացմունքով մը կը յիշենք Թէսալիոյ դաշտերուն մէջ ինկած հելլէն քաջերը, չենք կարող չյայտնել սակայն մեր արհամարհանքը բոլոր այն փառամոլ ու ապիկար վարիչներուն ու պետերուն, որոնք Գաղափարի կռիւն տակ պարտկել կը ջանան ատոր տրամագծապէս հակառակ գործ մը — ազատութեան ձգտող ընդունակ և զօրեղ ցեղի մը ջնջումը։

Կարելի չէ լռութեամբ անցնիլ նոյն կարգի ուրիշ երևոյթ մը — Թիւրքիացի յոյներն ցոյց տուած վախկոտ անշարժութիւնը այն միջոցին, երբ Մայր-Հայրենիքը անհաւասար կռիւ բռնուած էր իր դարաւոր թշնամիին հետ, երբ անդին ապստամբ Կրէտէն օգնութեան կը կանչէր հրդեհներու բոցին և հրացաններու ծուխին մէջէն։ Ո՞ւր էին, մի՛ ծակը մտան այդ բալիքարիները, որոնք արհամարհանքով կը խօսէին սեպտեմբեր 18-ի ցոյցին կամ օգոստոս 14-ի կռիւներու մասին. որոնք կըսպառնային Եըլտըզը կործանել, եթէ Թիւրք մը համարձակէր յոյնի մը մատն արիւնոտելու...։ Ինչո՞ւ այդ պարծենկոտ պարոնները դեսպաններու օգնութիւնը կ'աղերսէին, երբ ոստիկանութիւնը չարաչար կը հալածէր հելլէնական հպատակները, անոնց խանութները կը փակէր և կըստիպէր ամէն բան թողած Թիւրքիայէն հեռանալու։ Թիւրքիոյ յոյները ոչ միայն թշնամական դիրք բռնեցին հայոց նկատմամբ վերջին շարժումներու և կոտորածներու ատեն, այլև չուզեցին գործով աջակցիլ յանուն իրենց եղբայրներու ազատութեան մղուած պատերազմի մը — չվտանգելու համար իրենց դրութիւնը Թիւրքիոյ մէջ։ Այդ տխուր իրողութիւնները ցոյց տուին, որ Թիւրքիացի, մանաւանդ բիւզանդացի յոյները շատ բարձր չէր կանգնած մեր ունևոր քաղաքացիներէն, երբ իրենց հանգստութիւնը շատ աւելի կարևորութիւն ունեցաւ իրենց համար, քան հելլէնականութեան անցուցած մեծ տագնապը։

Յոյները իրենց վերջին փորձին մէջ չյաջողեցան, որովհետև չափէն աւելի յոյս դրին դիպուածին վրայ, քան իրենց խելքին ու բազուկներուն։ Օգնութիւն չգտան Բալկաններու հարստահարուած ցեղերէն, որովհետև իրապէս Թիւրքի լուծը իրենց լուծով կ'երթային փոխարինելու։ Մեծ սխալ մը գործեցին ոտքի չելլելով Թիւրքիոյ յոյները. կրակը տան մէջէն ալ պէտք էր տալ։ Այս դառն փորձէն ետք պիտի ըմբռնե՞ն արդեօք թէ անիրագործելի երազներու հաւատալէն աւելի գործնական է իրենց ջանքերը միացնել Թիւրքիոյ միւս հարստահարուած ազգերուն հետ, կազմել այն եղբայրութիւնը, որ իրենց անկախութեան պատերազմի անմոռաց օրերուն մէջ ծրագրուեցաւ, բայց անիրագործելի մնաց, ընդհանուր ուժերով ձեռք բերելու համար բոլոր այդ տանջուած ազգերուն ընդհանուր պահանջներուն գոհացումը։

* * *

Վերջացող տարին վերջ մը չդրաւ կրէտացիներու տառապանքին, վերջ մը որ այնքան մօտալուտ կը թուէր, երբ Վասօս զօրավարը յունական դրօշը պարզեց Կրէտական ճամբարին վրայ։ 97-ը եթէ չլուծեց այդ խնդիրը, բայց իրրև վիճած գործ մը ալ չյանձնեց 98-ին, ինչպէս կ'ակնկալէին Թէսալիոյ յաղթականները։ Եթէ պատերազմի ձախողանքը հելլէնականութեան ընդհանուր հաշիւին անցնենք, Կրէտէն շատ բան կորուսած չըլլար։ Իր արդի վիճակին և մօտիկ անցեալի կացութեան միջև բաղդատութեան փորձ մը պիտի բաւէ ցոյց տալու որ, կրէտական խնդիրը շատ աւելի սպառնալից կերպարանքով կը ներկայանայ Թիւրքիոյ համար, քան երբեք եղած էր։

Վերջին տասը երկար ամիսները, դժնդակ անստուգութեան օրեր յունական պատերազմով սկսած, ապարդիւն չանցաւ Կրէտէի համար։ Իրաւ է թէ Վասօս զօրավարի և արքայական քոմիսէր Գէննատիոսի դալուստը անհուն խանդավառութիւն առաջ բերին, բայց անոնց մեկնումը վհատութիւն չձգեց այդ լեռնցիներուն սիրտը։ Բախտի ելևէջներուն սովոր է կրէտացին, և շատո՞նց վարժ իր ապաւէնը իր լեռներուն և հրացանին մէջ որոնելու։ Նոյնը և այս անգամ ըրաւ. արագ յաջորդած այդ յուսախաբութիւնը ցոյց տուաւ միայն իրեն թէ ի՞նչ կրնար սպասել Եւրոպայի մաքիաւէլական քաղաքականութենէն։ Հասկցաւ Կրէտացին որ իր հաստատամտութենէն, արթնութենէն և խոհեմութենէն միայն կախուած էր այնուհետև ամէն բան։ „Անցեալին բոլոր չարիքները օսմանեան տիրապետութեան հետեւանքն եղան. ապագայի խառնակութիւնները ընդհակառակը մեր ժողովրդին պիտի վերագրեն“ կը գրէր Ազգային ժողովի նախագահը իր առաջին յայտարարութեան մէջ։ Եւ արդարև համոզելով որ դեռ շատ կրնայ ուշանալ նահանգապետի ընտրութեան խնդիրը, կրէտական նորահաստատ կառավարութիւնը ջանք չը խնայեց կարգը պահպանելու հրդեհուած կղզիին մէջ, արդարութիւնն ապահովելու ամէնուն համար, առանց կրօնքի խտրութեան։ Եւ իպատիւ իրենց պէտք է ըսել որ յաղթական ելան այդ փորձութենէն. իրենց ամէն մէկ քայլը իրենց փափուկ վիճակին այդ գիտակցութեան դրոշմը կը կրէր։ Կրէտէն այսօր իրապէս ազգային այդ իշխանութեան ենթարկուած է, եթէ հաշուի չառնենք քանի մը մեծ քաղաքները, ուր կը կենան եւրոպական ծովային և օսմանեան բերդապահ զօրքեր։ Ծովակալները կամայ ակամայ հարկադրուած են այսօր ճանչնալու Ազգային ժողովի նախագահը, իբր պաշտօնական ներկայացուցիչ ապստամբ Կրէտէի։

Տկարութեան նշան մը չէր, երբ յունական պարտութենէն ետք կրէտացիք խոհեմութիւն համարեցին Եւրոպայի առաջարկած ինքնավարութիւնն ընդունիլ, փոխանակ Մայր-Հայրենիքի հետ միանալու։ Ո՛չ. ամէն ժամանակէ աւելի զօրաւոր կըզգան իրենք զիրենք և դեռ վերջերս էր որ բացարձակ կերպով յայտարարեցին ծովակալներուն թէ յօժար են ընդունիլ կատարեալ ինքնավարութիւն մը, բայց ո՛չ թէ սուլթանի իշխանութեան, այլ գերիշխանութեան ներքև։

Եւ այդ ինքնավարութեան հիմնական պայմանը կը համարին օսմանեան բերդապահ զօրքին խսպառ հեռացումը կղզիէն։ Երբ այդ պայմանը կատարի, իրենք ալ պատրաստ են զինաթափ ըլլալ և թոյլ տալ քաղաքներն ապաստանած միւսիւլման ընտանիքներուն իրենց գեղերը վերադառնալու։ Որքան ալ որ այս պայմանը կը մնայ վիճելի, բայց պետութիւնները դեռ ամիս մը առաջ էր որ արգիլեցին օսմանեան կառավարութեան նոր զօրք խրկելու Կրէտէ, իրենց ծառայութեան ժամանակը լրացած զինուորները փոխարինելու։

Կրէտացոց ուղղամիտ, բայց միանգամայն անյողդողդ դիրքը պիտի հարկադրէր վերջիվերջոյ զիջանել անոնց պահանջներուն, և այսօր արդէն օրուան խնդիր դարձած է ինքնավարութեան ծրագրին մշակումը և ընդհանուր նահանգապետի ընտրութիւնը։ Եթէ հաւատանք Ռէյտէրի գործակալութեան մէկ հեռագրին, այդ ծրագիրը հետևեալ հիմնական կէտերը կը պարունակէ։

1. Կրէտէն, ինչպէս անցեալին նոյնպէս եւ ապագային մէջ պիտի կազմէ օսմանեան կայսրութեան մէկ մասը սուլթանի

իշխանութեան ներքեւ, բայց կողմին վարչութիւնն ու կանոնագիրը պիտի կազմին ու մշակին Արեւելեան Ռումէլիի ունեցածին ծեւով: 2. Կողմին պիտի ունենայ ինքնավար վարչութիւն մը եւ քրիստոնեայ նահանգապետ մը, սուլթանի կողմէն կարգւած 5 տարեան համար պետութիւններու համաձայնութեամբ: 3. Զինւորական ուժը որ պիտի կազմեն ժանտարմերին ու միլիսը, նահանգապետի քննթրոլին ներքեւ պիտի գտնւի: 4. Օսմանեան բերդապահ զօրքին թիւը պիտի կրճատուի, երբ կարգը վերականգնի: 5. Գործադիր իշխանութիւնը պիտի գտնւի Ազգային ժողովին ձեռքը, ուր ներկայացուցիչ պիտի ունենան ընակչութեան բոլոր մասերը, եւ օրէնքի նախագծերը գործադրութեան պիտի մտնեն, նահանգապետի վաւերացումը ստանալէ ետք: 6. Նահանգապետին պիտի արտօնւի 6 միլիօն ֆրանքի փոխառութիւն մը կնքել ամէնէն ստիպողական պէտքերը տեսնելու համար: 7. Կողմին բոլոր ուղղակի եւ անուղղակի հասոյթները իր համար գործածելու յատկացւած են: 8. Կրէտէն սուլթանին պիտի վճարէ, սակայն, տուրք մը, որու քանակը որոշւած չէ տակաւին:

Ազգ. ժողովը հրաւիրւած է փետրուար 1-ին նիստ գումարել վիճաբանութեան ենթարկելու համար պետութիւններու մշակած ծրագիրը: Եթէ վերև առաջ բերւած համառօտութիւնը վաւերական է, դիւրին է գուշակել որ խիստ քննադատութեան և մերժումի պիտի ենթարկւի ծրագրին քանի մը կէտերը, որոնք հիմնովին հակառակ են կրէտացոց ցարդ ձեւակերպած պահանջներուն: Բայց խնդրին ծանրութիւնը այսօր իրապէս ընդհանուր նահանգապետի ընտրութեան շուրջը կը պտտի, և գուցէ ատկէ կախւած ըլլայ մասամբ ինքնավարութեան ձեւն իսկ: Շէֆէր գնդապետի և Բօզօ Պէտրօվիչի թեկնածութիւններէն ետք, ամսէ մը իվեր յամառութեամբ կը խօսւի նոր թեկնածուի մը մասին, որու ընտրութիւնը մեծ յեղաշրջում մը կրնայ առաջ բերել կրէտական գործերուն մէջ: Ռուսաստանը առաջարկած է Գէորգ Թագաւորի երկրորդ զաւակին՝ Գէորգ իշխանին թեկնածութիւնը Կրէտէի նահանգապետութեան համար: Մանրամասնութիւնները կը պակսին: Աւելորդ է ըսել թէ այդ ընտրութենէն ետք Կրէտէի միացումը Յունաստանին ժամանակի խնդիր կրնայ ըլլալ միայն: Եթէ այդ առաջարկը խաղ մը չէ ռուս կառավարութեան կողմէն Մարդասպանին վրայ ճնշում գործ դնելու, մէկ կողմէն ինչպէս կ'ըսեն „ատամները ցոյց տալու" համար, և գուցէ ուրիշ կարգի զիջումներ ստանալու, — ներելի է այն ատեն ենթադրել որ ռուսները վերջապէս գլխի ինկան թէ իրենց վերջին տարիներու թիւրքամոլ քաղաքականութիւնը գերմանական ազդեցութիւնը զօրացնելու միայն ծառայեց: Այդ տեսակէտէն լաւ ընտրւած է վայրկեանը, երբ Գերմանիան Քիաօ-Չէուի խնդրով կաշկանդւած է Ծայրագոյն-Արեւելքի մէջ: Անգլիան, Ֆրանսան և Իտալիան արդէն տւած են իրենց հաւանութիւնը Գէորգ իշխանի թեկնածութեանը: Ինչպէս որ ալ վերջանայ այդ խնդիրը, պարզ է, որ եթէ Կրէտէն չկրնայ ձեռք բերել առայժմ իր տենչածը, բայց այլեւս դադրած է սուլթաններու իրական սեփականութիւնն ըլլալէ: Անկէ անդին դէպի կատարեալ անկախութիւնը քայլ մը է միայն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տարին Հարուստ էր խոշոր անցքերով, որոնք համաեւրոպական նշանակութիւն ունէին: Ամէնից առաջ դարձեալ Արեւելքն էր, որ այնքա՛ն հոգսեր պատճառեց Եւրոպային, այնքան ալեկոծեց քաղաքական աշխարհը: Նոր բան չէ: Արեւելեան հարցը շա՛տ տարիներ է, որ տիրապետում է եւրոպական քաղաքականութեան և տակաւին իր լուծման է սպասում:

Ընթերցողը յիշում է, թէ ինչպէս Կրէտէում նորից բռնկւեց ապստամբութիւնը, թէ ինչպէս յոյն ժողովուրդը, որ երկար տարիներ արցունքն աչքերին ականատես էր եղել հարազատ զաւակների չարչարանքներին, այս անգամ չկարողացաւ սառնասիրտ մնալ և արձագանգ տւեց. յիշում է ընթերցողը, թէ ինչպէս հետզհետէ բարդացաւ վիճակը, և թէ որպիսի ցնցում առաջացրեց պատերազմի յայտարարութիւնը Թիւրքիայի և Յունաստանի միջև. յիշում է, թէ ինչպէս եւրոպական նշանաւոր կոնցերտը (համերաշխութիւն) հրապարակ նետւեց, թէ ինչ դիրք բռնեցին մասնաւորապէս Գերմանիան, Ռուսաստանը և Անգլիան. յիշում է պատերազմի տխուր ելքը, սուլթանական զօրքերի աժանագին, բայց բարձրագոչ յաղթանակը: Ընթերցողը չի մոռացել նաև եւրոպական պետերի փոխադարձ, հանդիսաւոր այցելութիւնները, նրանց մեծագոյն ճառերն ու ծանուցումները յանուն խաղաղութեան ու եղբայրական աջակցութեան և. և.: Չենք ուզում երկարացնել մանրամասնութիւնների վերարտադրութեամբ, այլ միայն կը գրաղւենք մի քանի ընդհանուր խորհրդածութիւններով:

Վերջին տարւայ անցքերը մտածելու շատ նիւթ են տալիս: Արստրակցիա անելով բոլոր երկրորդական արժէք ունեցող հանգամանքները, մենք զատում ենք նրանցից երկու առաջնակարգ փաստ: Առաջինն այն է, որ միմիայն կռիւների ու սարսափների միջոցով է ձեռք բերւում միշտ ժողովուրդների ազատութիւնը, մի փաստ, որ կարմրագոյն գծով անցնում է ամբողջ պատմութեան միջից, և որ մենք քարոզել ենք սկսած Դաշնակցութեան ծննդեան օրից ու պիտի քարոզենք շարունակ: Վկայ է այդ փաստին Կրէտէի ազատիլը սուլթանական ճանկերից, և նրա ինքնավարութիւն ստանալը: Վկայ է Կուբան, որի դիւցազները տարիների յամառ ու արիւնալից մաքառումով ճանկեցին վերջապէս Սպանիայից իրենց հայրենիքի ինքնավարութիւնը, բայց դեռ շարունակում են մարտնչել յանուն կատարեալ անկախութեան:

Երկրորդ նշանաւոր փաստը, որ աչքի է ընկնում, դա Եւրոպայի հոչակաւոր կոնցերտի պահպանումն է և նրա ակներև անանկութիւնը, որ Հայաստանից յետոյ մի անգամ ևս պարզ ցոլացաւ յոյն-թիւրքական ընդհարումի մէջ: Անանկութիւն, որովհետև այդ կոնցերտը չի աջողում լուծել այն խնդիրները, որ նա ստանձնել է: Մենք տեսանք, որ հիւանդ մարդու դիմաց փտանգաւոր հիւանդ են և նրա բժիշկները, որոնցից ամէն մէկը առանձնապէս չի համարձակւում բուժել հիւանդին, իսկ բոլորը միասին չեն կարողանում ընդհանուր և իրական համերաշխութեան գալ:

Ի՞նչ է պատճառը, որ արեւելեան ճգնաժամը միշտ աւելի ծանրանում է: Ի՞նչ է պատճառը եւրոպական կոնցերտի հիւանդութեան:

Պատճառները շատ են. կը շեշտենք գլխաւորների վրայ: Ով որ շատ թէ քիչ ուշադրութեամբ հետևել է արեւելեան ամբողջ ողբերգութեան, սկսած Սասնոյ կոտորածից մինչև մեր օրերը, ով որ փորձ է արել անց-

քերի պատճառները որոնելու — ռուս կառավարութեան խաղացած տարդի ու ոճրագործ դերը երբեք չի վրիպել նրա ուշադրութիւնից։ Ամէն ոք զգում է, որ Ռուսաստանի վիթխարի ու անողոք ուժը մեծամեծ խոչընդոտներ է դնում ազգերի ազատութեան ճանապարհի վրայ։ Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Ռուսաստանի շնորհիւ է միայն յապաղում արևելեան հարցի լուծումը։

Ռուսիայով սկսւեց արևելեան հարցը, նրանով և զարգացաւ, կերպարանափոխւեց։ Բայց այլ էր Ռուսիայի դերը առաջներում, այլ է նա այժմ։ Սակայն նպատակը միշտ նոյնն է մնում՝ հասնել մինչև Միջերկրականը, գրաւել Պոլիսը, որ նախադուռը պիտի լինի դէպի աւելի հեռաւոր նւաճումներ։

Փոխւել է տակտիկան։ Երբեմն ցարիզմը յարձակողական էր, և սուլթանների ոխերիմ թշնամին, այսօր նա դարձել է Համիդի „բարեկամը“։ Երբեմն ցարը Մեծ Ազատարար էր Բալկանների վրայ, որտեղից հարթում էր նա իր ճանապարհը դէպի Պոլիս, այսօր այլևս ձեռնտու չէ նրան ազատարար լինելը։ Եւ, տարօրինակ բան, այսօր ռուսական դիւանագիտութիւնը ջերմ պաշտպան է կանգնում նոյն Statu quo-ին, (Թիւրքիայի ամբողջութիւն) որ ստորագրել է հէնց Ռուսաստանի դէմ հինգ պետութիւններից Բէրլինի վեհաժողովում։

Statu quo... արիւն ու արտասուք է նշանակում այդ թունաւոր խօսքը թիւրքահպատակ ժողովուրդների համար, անվերջ խռովութիւններ, մշտնջենաւոր անիշխանութիւն... Հո՞գ չէ։ Ցարի կառավարութեան հէնց այդ էլ ձեռնտու է։ Որչափ ներքուստ թոյլ ու սնանկ լինի Թիւրքիան, այնքան նա բարեկամ ու հնազանդ կը լինի ցարին. իսկ վերջինիս համար շատ թանկ է այդ հնազանդութիւնը։ Թող, ուրեմն, Թիւրքիան մնայ իր ամբողջութեամբ, բայց թող նրա մէջ մշտապէս տիրէ բողոքը, խռովութիւնները, անիշխանութիւնը... Այդ է Լօրանօվների փափագը։

Ոչ մէկը եւրոպական պետութիւններից այնքան ուժգին չի բողոքում Ռուսիայի այդ եղեռնագործ ընթացքի դէմ, ինչպէս Անգլիան, Ռուսիայի հինաւուրց ախոյեանը և ահարկու թշնամին։ Այդ թշնամութիւնը ծագեց և զարգացաւ նոյն չարաբաստիկ արևելեան հողի վրայ։

Անգլիան, որի իրական մեծութիւնը իր լայնածաւալ ազատ ու ինքնավար գաղութների մէջ է, որոնք սըփռուած են երկրագնդիս բոլոր անկիւններում, Անգլիան չէր կարող անտարբեր դիտել, թէ ինչպէս հիւսիսային բռնապետութիւնը միշտ աւելի և աւելի ծաւալւելով, սպառնում է իր տիեզերական տիրապետութեան, թէ ինչպէս ցարիզմը դիմում է միշտ դէպի հարաւ ու արևելք, դէպի մեծածաւալ Հնդկաստանը, տոգորուած չինգիզխանական անյագ տենչով՝ ամէն բան նւաճել, ամէն բան հպատակեցնել իր բռնապետական մտրակին։

Եւ Անգլիան շատ աշխատեց այդ վիշապի առաջն առնելու համար։ Մաքառեց նա անխտիր ամէն միջոցներով։ Յանուն վերը յիշած նպատակի՝ Անգլիան առաջներում թիւրքասէր քաղաքականութիւն էր մղում, ամենաեռանդուն պաշտպան հանդիսանալով Թիւրքիայի ամբողջութեան՝ ընդդէմ Ռուսիայի։ Կիպրոսի ամօթալի դաշնագիրը այդ քաղաքականութեան պսակն եղաւ։

Բայց այն ժամանակից իվեր փոխւեց իրերի վիճակը։ Մի կողմից հայկական շարժումներն ու ազէտները, միւս կողմից Ռուսիայի բռնած դիրքը փոխեցին Անգլիայի վաղեմի քաղաքականութիւնը Թիւրքիայի նկատմամբ։ Եւ անգլիական կառավարութիւնը բողոքում է այսօր այն մարդասպան Statu quo-ի դէմ, որ Լօրանօվներն են ձգտում պահպանել Թիւրքիայում։ Սակայն, որքան աւելի է բողոքում Անգլիան, որքան նա աւելի է աշխատում միջամտել կամ ընդհանուր իրական կոնցերտ կազմակերպել Հայաստանի ազէտներին վերջ դնելու համար, նոյնքան աւելի է բորբոքւում սուլթանը և... նոյնքան աւելի է ամրապնդւում բարեկամութիւնը երկու բռնակալների՝ ցարի և սուլթանի միջև։ Այդպէս էր հայկական ամբողջ ողբերգութեան ընթացքում, ուր ցարիզմի խաղացած ծՀրէշային դերը յայտնի է բոլորին։

Բայց Կրէտէի դէպքում ևս տարբեր չէր Ռուսիայի տակտիկան։ Նա միշտ չափւած ու ձևւած է որոշ նախագծի համեմատ։ Ոչ միայն Ռուսիան չի ուզում ստեղծել արևելքում մի „հայկական Բոլգարիա“ այլ նա Կրէտէի ազատութեան ևս հակառակ է։ Գերմանիայից յետոյ Ռուսիան ամենամեծ հակառակորդն էր Կրէտէի միացման Մայր-Յունաստանին։ Ինչո՞ւ։ Դարձեալ նման պատճառներ։ Ցարի կառավարութեան հաճելի է, որ կրէտական հարցը ևս միշտ հարց մնայ, անլուծելի, նրան ձեռնտու է, որ հրաբուխը Կրէտէում ծխէ շարունակ, մինչև որ անորոշ ապագայում մի գեղեցիկ օր „օգնութեան“ հասնէ ցարի „ազատարար“ բաղուկը։ Իսկ այդ նպատակի համար փոխանակ կատարեալ անկախութեան, աւելի յարմար էր ինքնավարութիւն տալ Կրէտէին սուլթանի գերիշխանութեան տակ, մի դրութիւն, որ դեռ անվերջ խռովութիւնների աղբիւր կարող է լինել քանի որ Կրէտէն լիակատար ազատութեան է ձգտում։

Միւս կողմից՝ Բոսֆորը տանող ճանապարհի վրայ Յունաստանը առանց այն էլ մի խոչընդոտ է Ռուսաստանի համար. պէտք չէ, ուրեմն, որ Յունաստանը աւելի ուժեղանայ Կրէտէի միացումով...

Այո՛, փոխւել է ցարիզմի դերը։ Առաջներում նրա նպատակը կեղտոտ էր, յետադէմ, բայց գէթ միջոցները մաքուր էին, մարդասիրական։ Իսկ այսօր կեղտոտ են թէ նպատակը, թէ միջոցները։ Առաջներում դիմում էր նա իր նպատակին՝ ժողովուրդներ փրկելով, այսօր դիմում է նոյն նպատակին՝ ժողովուրդներ խեղդելով...

Անգլիա Կրէտէի հարցում ևս մենակ էր։ Նա միշտ մնում է կղզիացած, առանց տեղական դաշնակիցների — և այդ տխուր իրողութիւնը ցաւով ու դառնութեամբ է դիտւում ժողովուրդների ազատութեան բոլոր բարեկամներից։ Ֆրանսիան, յեղափոխութիւնների և ռամկավարական սկզբունքների որորանը, Ֆրանկ-պրուսական պատերազմից յետոյ ճակատագրական և կարծես անդառնալի կերպով նետւեց Ռուսիայի գիրկը։ Այսօր նրա արևելեան քաղաքականութիւնը ռուսական մրցատով է ձևւում, չնայելով, որ Ֆրանսիայի բուն ժողովուրդը իր հայասէր ու յունասէր շարժումներով շատ անգամ բողոքեց թիւրքական բռնութիւնների և Հանոտոյի ընթացքի դէմ։

Գերմանիան՝ երեքպետեան դաշնակցութեան պարագլուխը, ներկայումս բացարձակ թշնամութիւն է սկսել Անգլիայի դէմ։ Պատճառը զուտ տնտեսական է։ Թզուկ

Վիլհելմը ատելով ատում է անգլիական մրցումը համաշխարհային շուկայում, գերմանական ապրանքների դիմաց։ Նրա ցանկութիւնն է յաղթահարել այդ մրցումը և տիրապետող դարձնել գերմանական առևտուրն ու ինդուստրիան։

Թշնամանալով Անգլիայի հետ, Գերմանիան թև է տալիս Ռուսաստանին և երկուսը միասին փառաւորապէս հաստատւում են Չինաստանի ափերում։ Վերին աստիճանի նշանակիչ են վերջին դէպքերը Ծայրագոյն Արևելքում, ուր մի նոր երեքպետեան դաշնակցութիւն կազմուեց Ռուսիայից, Ֆրանսիայից և Գերմանիայից... միանում են նոյն իսկ պատմական երդուեալ թշնամիները։ Էլզաս-Լոտարինգիայի հարցը շոգիանում է կարծես... Այդպիսով երկու մեծ դաշնակցութիւնները մտնում են իրար, միշտ աւելի և աւելի մեկուսացնելով Անգլիային։

97 թուականն էլ բաւականաչափ ամրացրեց այն շղթան, որ կապում է հինգ խոշոր ցամաքային պետութիւններին։ Պարզուեց, որ երեքպետեան, երկպետեան դաշնակցութիւնները աւելի խաղաղ բնաւորութիւն ունեն, քան պատերազմական։

96 թուի վերջերում սպիտակ ցարը յաղթական քայլով սլացաւ Արևմուտքի միջով։ Բոլոր ցամաքային զօրութիւնները երկիւղածութեամբ խոնարհուեցան նրա առջև. Պարիզը դղրդաց հիւրընկալելով իր թագադիր դաշնակցին, աստուածացրեց նրան։ Ցափշտակութեան գագաթնակէտն էր։ 97-ի օգոստոս ամսին Ֆրանսիական հանրապետութեան նախագահը պատասխանեց կայսերական այցելութեան։ Ամբողջ աշխարհը լարուած ուշադրութեամբ սպասում էր, որ ցարը արտասանի ֆրանսիացիների բաղձալի խօսքը։ Եւ ցարը արտասանեց „երկու դաշնակից ազգեր“ բառերը, բայց իսկոյն աւելացնելով, որ դաշնակցութիւնը յանուն խաղաղութեան է։

Տօնախմբութեան, մեծաշուք հանդէսների թատր էր Պետերբուրգը, ուր յաջորդաբար եկան Վիլհելմ II, Ֆելիքս Ֆոր և Ֆրանց Յոսէֆ։ Նոյնպէս թնդալից ցոյցեր եղան Վիեննայում, Բուդապէստում, Բէրլինում, ուր թագաւորները փոխանակւում էին համբոյրներով և ընդհանուր խաղաղութեան ծանուցումներով... Բացառիկ տարի էր 97 թուականը։

Եւրոպան խաղաղութիւն է ուզում։ ամէնքը գիտեն այդ, բայց ոչ ամէնքը թափանցում են իրական պատճառների մէջ։ Ինչո՞ւ հէնց ներկայումս է ամէնից խիստ զգացւում խաղաղութեան պահանջը պետութիւնների մէջ։ Ինչո՞ւ այդպէս դողում են նրանք, հէնց որ մի փոքրիկ հրդեհ է բարձրանում Արևելքում և ինչո՞ւ ամէնքն էլ, նոյն իսկ Ռուսաստանը, աճապարում են կոնցերտ կազմակերպել... Ինքը դաւանելով այսօր „չմիջամտելու սկզբունքը“, Ռուսիան շտապում է անմիջապէս ուրիշների հետ ընդհանուր համաձայնութեան գալ, երբ մի ուրիշ պետութիւն սպառնում է մենակ միջամտել արևելեան գործերում։ Այդ ընթացքը նշմարելի էր հայկական ճգնաժամում, բայց աւելի պարզ՝ յոյն-թիւրքական պատերազմի միջոցին։ Ռուսիան ամենայն եռանդով հոգում էր ուրիշ պետութիւնների հետ, որ պատերազմը տեղի չունենար։ Բայց երբ արդէն բանը բանից անցաւ, Ռուսիան աւստրիական կայսեր աջակցութեամբ ջանք թափեց, որ պատերազմի հրդեհը չտարածուէր հեռուն, բալկանեան ուրիշ երկրների վրայ։

Դողում է ցարի կառավարութիւնը, մի գուցէ բարդութիւններ առաջանալով, ընդհարման մէջ ընկնի ինքը որ և է եւրոպական պետութեան հետ։ Ամէն մի պատերազմ, ինչ էլք էլ որ ունենայ, աւերիչ կերպով է ազդում երկրի տնտեսական վիճակի վրայ։ Առաւել ևս վտանգաւոր է նա այսօր Ռուսիայի նման մի ահագին պետութեան համար, որ մի արհեստական խմոր է, մի հսկայական շինուածք, կառուցած մտրակի ու գաւազանի վրայ, ուր ճնշուած ազգութիւնները մշտապէս ալեկոծութեան մէջ են, ուր դեռ ևս կայ քառասուն միլիոնաւոր քաղցած ռուս գիւղացիութիւն, որ ողբում է միշտ իր սև, տաժանելի կեանքը, և որ կարող է, վայրկեանը հասած միջոցին, ինքնաբերաբար ժայթքել և ռուսական միապետութեան ջնջման պատճառ դառնալ։

Մոտաւորապէս նման պայմանների մէջ է գտնւում Աւստրիա-Հունգարիան։ Մի որ և է պատերազմ կատարեալ դժոխքի կարող է փոխել այդ բազմացեղ, բազմալեզու կայսրութիւնը. ազգութիւնների միջև ներհակութիւնը վերին աստիճանի լարուած է։

Իտալիան, որի կառավարութիւնը Մէնէլիքի հետ անփամ չկարողացաւ շնորհքով կռիւ մղել Ադուայի տխրահռչակ պարտութիւնից յետոյ նա ևս խաղաղութեան է կարօտում։

Ամէն մի պետութիւն իր ներքին ցաւերն ունի, իր յատուկ հիւանդութիւնը։ Բայց կայ մի ընդհանուր, զարհուրելի և վարակիչ „հիւանդութիւն“, որը սարսափի մէջ է պահում բոլոր պետութիւններին և ստիպում նրանց պատերազմից խոյս տալ։ Դա սոցիալիզմի ահն է, որ պատրաստւում է իսպառ բնաջինջ անել ամէն պետութիւն, լինի դա միահեծան, թէ սահմանադրական-հանրապետական։

Մի ամբողջ դար է գրեթէ, որ սոցիալիզմի ուրուականը շրջում է Եւրոպայում, բայց վերջին տասնեակներում էր գլխաւորապէս, որ նա տարածեց իր ցանցերը քաղաքակիրթ աշխարհի վրայ, զօրացաւ և ամուր հաստատուեց մանաւանդ Գերմանիայում, ուր արդիւնագործութեան արագընթաց զարգացման հետ առաջ գնացին զուգընթացաբար բանւոր դասակարգի թշուառութիւնը և բիւրօկրատ պետութեան ճնշումն ու հալածանքները։

Օր աւուր ձգւում է, լայնանում անդունդը բանւոր և բուրժուա դասակարգերի միջև. արագ արագ աճում է սոցիալիստական կուսակցութիւնը։ Նա արդէն խոշոր ուժ է կազմում պարլամէնտներում, իսկ նրա վիթխարի գործադուլները այսօր, այս վարկենիս դղրդացնում են ամբողջ բուրժուական աշխարհը։ Թւում է, որ հեռու չէ սոցիալիզմի յաղթանակի փառաւոր օրը։ Գլադստոնը չի սխալւում իր մարգարէութեան մէջ. „20-որդ դարը սոցիալիզմի դարն է“։

Ահա մի ահռելի „չարիք“, որից փրկութիւն չկայ. ահա մի մոլեգին ուժ, որ երբեմնապէս դուրս է վիժում և տակն ու վրայ անում ամէն բան, որ այսօր ևս, օգտուելով պատերազմից առաջ եկած կառավարութիւնների թուլութիւնից, գլուխ կը բարձրացնի և կը խորտակի բուրժուական թագաւորութիւնը։ Հարկաւոր է յիշել միայն „Կոմմունայի“ տիրապետութիւնը Պարիզում 1871 թուին ֆրանկ-պրուսական պատերազմի միջոցին, երբ բանւորները տապալելով քաղաքական մարմինը, իրենց ձեռքն առին կառավարութեան ղեկը և

արհաւիրքների մէջ իշխեցին ամբողջ ամիսներ։ Եթէ ներկայումս կրկնուեն նման պատմական վայրկեաններ, բանուորական ուժը կարող է ժայթքել անհամեմատ աւելի կատաղութեամբ և հաստատուն կերպով։ Ահա ուրեմն մի առաջնակարգ պատճառ ևս, որ եւրոպական կոնցերտը կանգուն է մնում, որ պետութիւնները չը նայելով իրենց փոխադարձ ներհակութիւններին, ձգտում են խաղաղութիւն պահպանել։ Բայց դա ևս չի փրկի։ Ոչ մի ուժ, ոչ մի խաղաղութեան կոնցերտ չի կարող ազատել պետութիւններին սոցիալիստական յեղափոխութեան արհաւիրքներից. բանուորական հարցը, միշտ աւելի զարգանալով՝ հիւսում է արդէն բուրժուական Եւրոպայի մահապատանը։ Նա մի ուրիշ, բոլորովին տարբեր խաղաղութիւն է պատրաստում — մի խաղաղութիւն, ուր կը թագաւորէ իրական հաւասարութիւնը և իրական եղբայրութիւնը։

Եւրոպան խաղաղութիւն է ուզում, բայց ժողովուրդները, որոնք դեռ կը հեծեն բռնակալի խարազանի տակ, ոճիր կը համարեն այդ խաղաղութիւնը, մինչև որ իրենց ազատութիւնը ձեռք չեն բերի։ Հին Արևելքը կ՚աւերուի մշտնջենապէս, հրաբուխը կը ծխէ շարունակ և կը յաւերժացնի պատերազմների երկիւղը, խանգարելով միշտ ալևոր Եւրոպայի անդորրութիւնը...

Ո՞Ւ՞Մ ԼՍԵՆՔ

(ՆԱՄԱԿ ԲՈՂԴԱՐԻԱՑԻՑ)

—

Դեռ շատ չի անցել այն օրից, երբ յեղափոխական ասպարէզի վրայ էր մեր երիտասարդութեան միայն փոքրիկ, բայց աւելի զգայուն մասը։ Այն ժամանակ մեր խոհեմ և վախկոտ էֆէնդիներն ու պարոնները, որոնք ամէն տեղ ապահով են և չեն հետաքրքրւում ճնշուող միլիոնաւոր ամբոխի տանջանքով, ծաղրում էին առաջին հայ յեղափոխականներին և խենթեր անուանում նրանց։ Տաքարիւն, կենսական գաղուռ շահերի տղմից ազատ երիտասարդութիւնը ուշք չդարձրեց ազգային պատէնտաւոր խելօքների վրայ և, բոլորովին թարմ ուժին յատուկ թափովը, անձնատուր եղաւ միակ միջոցին, որը միայն կարող էր հային ազատել վերջնական կորստից, մաքրել նրան դարևոր ստրկութեան մէջ ձեռք բերած բարոյական ախտերից և իր մարդկային յատկութիւններին կանոնաւոր կերպով զարգացնելու միջոցը տալ։ Բայց հայկական յեղափոխութեան արագաբար զօրեղանալը, առաջին, թէև փոքրիկ, բայց հերոսական աջող քայլերը դէպի յեղափոխութիւնը, հրապուրեցին և այնպիսիներին, որոնք ոչ յեղափոխական ոգի ու տէմպերամենտ ունէին և ոչ էլ քաղաքացական արիութիւն դիմադրելու ամէն մի յեղափոխականին հանդիպող դժուարութիւններին, և որոնք սակայն հրապարակի վրայ յայտնի էին իբր ժամանակակից յառաջադիմական գաղափարների համար կուռողներ, քարոզողներ և պաշտպաններ։ Սրանք, տեսնելով որ յեղափոխութիւնը ընդլայնւում է և եթէ իրենք չմասնակցեն, կորցնելու են իրենց հեղինակութիւնն ու գիրքը թէ փոքր և թէ մեծ շրջանակներում, ստիպւած եղան ենթարկւել նոր հոսանքին։ Հայկական յեղափոխութիւնը մոդա դարձաւ և շայդ նոր մոդային հետևեց թէ հայ գրչավաճառ գլխագէտը, թէ հարստահարող բուրժուան, թէ կղերը, թէ մետաքսի ու ոսկու մէջ ընկղմւած տիկինն ու օրիորդը...

Այդ պատահական յեղափոխական տարրը փոքրիկ երեխայի նման չէր հասկանում իր մօտեցած կրակի զօրութիւնը և թեթևամտութեամբ մօտեցաւ գրկելու միս ու կաշին դաղող կրակը։ Հէնց որ գրկեց, ամբողջ մարմնով այրւեց, ետ ընկաւ և իր միջից արտադրեց դաւաճան, լրտես, խաբեբայ և մի ամբողջ վոհմակ յեղափոխութեան թշնամիներ։ Եւ այդ շատ բնական էր. դարևոր ստրուկ հայը միանգամից չէր կարող արտադրել ամբողջովին մաքուր, հաբքաշ և ուժեղ կամքով յեղափոխական տարր։ Հայկական չտեսնւած ու չլսւած սարսափները դուրս նետեցին այդ պատահական և բարոյական սնանկութեան հասած յեղափոխական տարրին, որը արդէն իր դերը կատարել էր և եթէ շարունակէր մնալ հայ յեղափոխական կեանքի մէջ, ամէն քան պէտք է աղտոտէր, տապալէր յոգուտ մեր կաշին քերթող բռնապետութեան։ Սակայն այդ նեխիչ տարրը, ուզում է ծածկել իր բարոյական սնանկութիւնը հայ ժողովրդից, որ մինչև այժմ նրանց հաւատացել էր իր բախտը, կեանքը ու դրամը, և եթէ ընդունէր այդ հրէշների բէակցիայի — յետադարձութեան — բուն պատճառը, իր ձեռքով պէտք էր պատառ պատառ անէր։ Դրա համար էլ այդ ազգային հրէշների վոհմակը կոկորդիլոսեան արցունքն աչքերին աղաղակում է. — Հաշտւենք սուլթանի հետ, յեղափոխութիւնը վնասակար է, մեր գործող յեղափոխականները անփորձ են, փառասէր են, եսամոլ են ևն...

Դրանց ձայնակցում են և հայ վատ ու ծոյլ կղերը, իր բուրժուական հարէմական հանդարտութիւնից փոքր ինչ զրկւած հայ չարչի վաճառականը։

Եւ այդ այն ժամանակ, երբ անցել է հայկական յեղափոխութեան ամենադժւար մասը, այն ժամանակ, երբ հայը նոր է զգացել, թէ ի՞նչ քաղցր և պատւաւոր բան է իրեն ճնշողի արիւնը թափելը, այն ժամանակ, երբ նոր է սկսւում տասնեակ հազարներով մորթւած հայերի վրէժը լուծելը, վերջապէս այն ժամանակ, երբ մենք գտնւում ենք հայկական բուն ապատամբութեան նախընթաց օրում։

Չնայելով այս բոլորին, զօրեղացել է և բուն, մաքուր յեղափոխական տարրը, զօրեղացել և ճիւղաւորւել այնքան, որչափ չի եղել երբեք և աւելի պէտք է զօրեղանայ, եթէ մենք գործը տանենք ժամանակի պահանջների համեմատ։

Եւ մենք մեր խօսքը վերջացնելով, դիմում ենք այդ տարրին։

Լսեցէ՛ք, անկեղծ և հաւատացող հայ յեղափոխականնե՛ր. բուն երկրից, հին և նոր աշխարհների անկիւններից լսւում են վատերի, դաւաճանների, շահամոլների, պաղած խոհեմների ձայները։

— Կանգնենք, չկռւենք, հաշտւենք սուլթանի հետ։

Միւս կողմից շշնջում են հայրենիքի ոգին, մորթւած ու ընկած հերոսների հոգիները և մարդկային պատւախնդրութեան զգացմունքը։

— Կռւեցէ՛ք, լուծեցէ՛ք մեր վրէժը. ազատեցէ՛ք։

Ո՞ւմ լսենք։

„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ“ ԵՒ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

(ՆԱՄԱԿ ՊԱՐԻԶԻՑ)

Վերջին ժամանակներս հայ հասարակութեան մէջ յեղափոխական շարժումների դէմ ուղղած տրտունջների առթիւ ցանկանում ենք մեր կողմից մի քանի խօսք ասել։

Ի՞նչ է յեղափոխական հոսանքի պատճառը։ Ինչո՞ւ մարդիկ, թողած օրինական, խաղաղ կեանքը, լաց ու սուգի մէջ ձգելով իրենց ծնողներին, մղւում են յեղափոխութեան գիրկը՝ զանազան տանջանքներ, զրկանքներ, չարչարանքներ կրելու։ Մի՞թէ „խենթութիւնը“ կամ սնափառութիւնն է պատճառ։ — Ի հարկէ, ո՛չ։ Այդպէս կարող են մտածել միայն տգէտ ու անհասկացող մարդիկ. նրանք, որոնք չեն հասկանում, թէ ինչ է պատմութիւնը, ինչ է առաջադիմութիւնը։ Այդ մարդիկ սկզբունքով հակառակ են յեղափոխական շարժման և վերջին կոտորածները լիովին վերագրում են յեղափոխական գաղափարին։ Այդ պարոնները, ապրելով շքեղ պայմաններում ու արտօնեալ դրութեան մէջ, անկարող են զգալ թշւառ մշէցու տանջանքները. նրանք չեն հասկանում, որ եթէ հայը դիմում է յեղափոխութեան, դա այն պատճառով է, որ ուրիշ ելք չունի։ Այդ պարոնների մասին չէ խօսքը, այլ նրանց մասին, որոնք, ընդունելով յեղափոխական շարժումը սկզբունքով, իբրև միակ միջոց հասնելու ցանկալի նպատակին, մեղադրում են մեր յեղափոխական մարմինները, մանաւորապէս „Դաշնակցութիւնը“, բոլոր դրժբախտութիւնները նրանց վերագրելով։

Ամէն մի շարժում, որ առաջ է գալիս այս կամ այն ազգի մէջ, ընդհանուր ուղղութեան հետ միասին ունի և իր բնորոշ գոյնը, տարբեր ուրիշ ազգերի համանման երևոյթներից։ Ամէն տեղ յեղափոխութիւնը արտայայտւել է նոյն ազգի սովորութիւնների, տէմպէրամէնտի, բնաւորութեան համաձայն։ Ուրիշ խօսքով՝ պատմական երևոյթները պատկանում են ամբողջ հասարակութեան, և եթէ նրանք արտայայտւում են այսպէս, թէ այնպէս (վատ թէ լաւ) — դրա պատճառը ինքը հասարակութիւնն է՝ իր բարքերով, սովորութիւններով, մտաւոր, բարոյական և նիւթական ուժերով հանդերձ։ Գալով Դաշնակցութեան գործունէութեան գնահատելուն, նախ և առաջ պիտի ասենք, որ այդ բանը ապագայ հայ պատմագրին է պատկանում. իսկ այժմ, մեր միտքը պարզելու համար, ենթադրենք, որ Դաշնակցութիւնը վատ է տանում յեղափոխական գործը և տեսնենք թէ որքան ճշմարտութիւն կայ այդ դատապարտութեան մէջ։

Ումից է բաղկացած այդ Դաշնակցութեան մարմինը և ումից է ստանում նա իր բարոյական ու նիւթական միջոցները։ Չէ՞ որ Դաշնակցութիւնը կազմակերպւած է նոյն հայ հասարակութեան անդամներից և իր բարոյական ու նիւթական միջոցները ստանում է նոյն հասարակութիւնից։ Եւ ո՞վքեր են այդ անդամները... Մենք վստահանում ենք ասել, որ նրանք հասարակութեան ամենաքաջարի և ամենակորովի որդիքն են. նրանք, որոնք անտես անելով տանջանքները և մահը, իրենց զոհել են ընդհանրութեան շահերին. ուրեմն յեղափոխական տեսակէտից նրանք հասարակութեան ամենագործունեայ և ամենագաղափարական մասն են կազմում։ Այդ այն մասն է, որը տարիներով շարունակ քարոզում է ժողովրդի մէջ, տարածելով նրա մէջ յեղափոխական գաղափարը, որը, ահագին դժւարութիւնների յաղթելով, զէնք է բաժանում ժողովրդին, ֆէդայական խմբեր է կազմակերպում. որը, շատ տեղ պաշտպանեց ժողովուրդը կոտորածից և վերջապէս, այնպիսի սքանչելի յաջողութեամբ առաջ բերեց Օսմանեան Բանկի գրաւումը ու Խանասորի արշաւանքը, ջնջելով Շարաֆի ամբողջ ցեղը։

Այս բոլորը իրագործելու համար հայ յեղափոխականը իր կեանքն էր զոհում, իր արիւնն էր թափում...

Ի՞նչ էին անում այդ ժամանակ հայ յեղափոխականներին դատապարտողները։ Նրանք, թատրօնի հանդիսականների նման, անգործ դրութեան մէջ, դիտելով հայ յեղափոխականի գլադիատորական կռիւը, պախարակում էին նրան և երբեմն միայն ծափահարում, առանց մը տածելու մի լուրջ օգնութիւն հասցնելու։ Աւելի պատւաբեր չէ՞ր լինի, պարոններ, եթէ թողնէիք հանդիսականի և կրիտիկոսի անանձնական դերը, մտնէիք յեղափոխական ասպարէզի մէջ և, մեզ հետ գործելով, մեզ ճանապարհ ցոյց տայիք։ Այն ժամանակ, տեսնելով ձեր գերազանցութիւնը... կը գոչէինք. „Հապա՛ն, յառաջ, գալիս ենք ձեր յետևից“։

Իսկ ունևո՞ր դասակարգը... Օ՜, նրա վերաբերմունքը դէպի հայ յեղափոխութիւնը աւելի վատ է։ Այդ դասակարգը մի կոպէկ տալով հայ յեղափոխականին, պահանջում է նրանից հազարների գործ, նա կարծում է, թէ իր մի քանի կոպէկով կարելի է „Հայաստանն ազատել“, մոռանալով որ յոյները երբեմն իրենց ամբողջ միլիոնաւոր կարողութիւնն էին նուիրում յեղափոխական գործի համար։ Հայ հասարակութեան մտքովն էլ չի անցնում, որ հինգ կոպէկանոց փամփուշտը մինչև իր նշանակւած տեղը հասնի, արդէն 40-50 կոպէկ է նստում, որ 15-20 բուբլիանոց հրացանը երեք այնքան ծախս է բռնում ևն։ Այս բոլորը նա չգիտէ և, տեսնելով միայն յեղափոխական խաչագողների զեղծումները, դրանով բացատրած է համարում իր համար ամէն բան։ Բայց չէ՞. չարաչար սխալւում է հայ հասարակութիւնը։ Ի՞հարկէ, խաչագողներ, դժբախտաբար կան յեղափոխականների մէջ, և դա մի շատ մեծ չարիք է, որի դէմ մինչև հիմա կուել է Դաշնակցութիւնը և այսուհետև պիտի կուի աւելի խիստ կերպով... Բայց թող հասարակութիւնը իմանայ, համոզւի, որ նրա տրւածը շատ ու շատ չնչին է յեղափոխական պահանջների հետ համեմատած։ Նիւթական սուղ միջոցների շնորհիւ է, որ հայ յեղափոխական շարժումը չի կարողանում ուժեղ կերպարանք և լայն ծաւալ ստանալ։ Հայ յեղափոխական շարժումը կանոնաւոր և անընդհատ կերպով չի շարունակւում իր շաւղով միևնոյն ուժով, այլ նա ենթարկւած է ալեկոծութեան. նա կամ բռնկում է իւղ ստացած բոցի պէս, կամ մխում է երբ իւղը պակասում է։ Որ Դաշնակցութիւնը իր զօրութեան ապացոյցներ է տւել, — օրինակներ ձեզ Օսմանեան Բանկի գրաւումը և Խանասորի արշաւանքը։ Բայց թէ ի՞նչու այդ զօրութիւնը աւելի յաճախ չի արտայայտւում, — այն պատճառով, որ նիւթական միջոցները պակասում են. մարդիկ կան, գործողներ կան, — նիւ-

թական միջոցներ — ո՛չ։ Հայ յեղափոխականը տալիս է իր ունեցած-չունեցածը, իր կեանքը, դուք տուէք ձեր դրամի գոնէ հարիւրերորդականը։

Իր պարտքը կատարելով միայն, հայ հասարակութիւնը պիտի պահանջի յեղափոխական մարմիններից, որ վերջիններս ստեղծեն ուժեղ կազմակերպութիւն, արտաքսեն յեղափոխական շրջանից խաչագողներին, պատժեն չարագործներին, որոնք անասելի վնասներ են հասցնում յեղափոխական սուրբ գործին, և, առհասարակ, հայ յեղափոխական գործը դնեն հաստատ հիմունքների վրա։

Ահա միմիայն այս փոխադարձ պարտականութիւնների և պահանջների միջոցով կարելի է յեղափոխութեան յաջողութիւնը պսակել։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԻ ՆՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

„Միութեան և առաջադիմութեան օսմանեան կոմիտէից“, կամ ուրիշ խօսքով Երիտասարդ Թիւրքերի վարչութիւնից ստացանք մեծ պետութիւններին ուղղած իրենց մի նամակի պատճէնը, որ խնդրում են տպագրել Դրօշակի մէջ։

Ահա այդ նամակը.

Պ. Նախարար,

Օգոստոս ամսւայ ընթացքում սուլթանը Միութեան եւ Առաջադիմութեան Օսմանեան Կոմիտէիս ուղարկել էր մի պատգամաւորութիւն, որի գլուխն էր իր սիրելիներից մէկը՝ Ասմէդ Ջէլալէդդին փաշան եւ որի միջոցով հանդիսաւոր խոստում էր տալիս իրագործել ընդհանուր բարենորոգումները, սկսելով կատարեալ ներումից թէ քրիստոնեաների եւ թէ մահմէդականների համար։ Մենք թէեւ քաջ գիտէինք սուլթանի միտումները՝ դժբաղդաբար մակիաւէլական, հազարաւոր փորձերից յետոյ թէեւ ոչ մի հաւատ չէինք ընծայում նրա զեղեցիկ խոստումներին, այնուամենայնիւ մենք չկամեցանք նրա վեհապետական ինքնասիրութիւնը կոտրել եւ ահա այնպէս, մենք վերջին անգամ մեր անկեղծութեան ապացոյցը տուինք նրան, կամովին խաբւած մնալով։ Մինչեւ իսկ մեզանից մի քանիսը Պոլիս մտան նրան խրախուսելու յուսով։ Բայց սուլթանը, ինչպէս առաջ, չյարգելով իր սեփական խոստումները, փոխանակ իսկոյն եւ եթ ընդհանուր ներում հրատարակելու, աքսորեց, քանտարկեց, դատապարտեց կամայաբար բոլոր պատուաւոր մարդկանց, իբր Երիտասարդ Թիւրքիայի անդամներին. բարենորոգումների փոխանակ ծեռնարկեց մեր կոմիտէի դէմ զրպարտութիւններ արձակելու անվայել գործը իր բազմաթիւ գործակալներու միջոցով՝ մեզ անուանարկելու նպատակով թէ ներսը եւ թէ դուրսը։ Նա մինչեւ իսկ մեր կատարեալ քայքայումը պաշտօնապէս յայտարարելու ատիճանին հասաւ, ասելով թէ Երիտասարդ Թիւրքիայի գոյութիւնը՝ միայն մի քանի փառամէրների Եւրօպայում՝ տարածած սոնոն Լուրերի ծնունդն է եւ թէ նրան յաջողւել է խեղդել կուսակցութիւնը այդ փառասէրներին կաշառելով։

Կոմիտէս այս անգամ կատարեալապէս համոզւած, որ սուլթանը միայն ուժի ազդեցութեան տակ տեղի կըտայ ազգի կամքին, հաշտութեան ամէն մի միջոց անտեղի համարելով, վճռեալ է մղել խիստ արշաւանք եւ կատաղի կռիւ, որպէսզի կարողանայ մեր դժբաղդ երկրում հաստատել ներկայ առաջադիմութեան համապատասխան իրերի մի դրութիւն։

Մենք չենք դադարիլ նոյնպէս ամէն մի յարմար դէպքում ներկայացնել մեծ պետութիւնների խորհրդածութեան օսմանեան կայսրութեան սահմանադրութիւնը, որ միակ իրական դարմանն է վերջ տալու միապետական եւ չարագործ իշխանութեան զեղծումներին, որից բղխում են Յաճկաստանի մի ծայրից մինչեւ միւս ծայրը ամէն օր կատարւող քստմնելի գործերը, որի զոհն են քրիստոնեաներն ու մահմէդականները։

Մեծ պետութիւնները անազին ծառայութիւն մատուցած կը լինեն ոչ միայն օսմանցիներին, այլ եւ ընդհանուր խաղաղութիւն պահպանելուն եւ դրանով ամբողջ մարդկութեան, եթէ կատարեն այն, ինչ կարող են, արագացնելու համար՝ առանց կրօնի եւ ցեղի խտրութեան, բոլոր օսմանեան հպատակներին վերաբերող բարեկարգութիւնների հարցը։

Ընդունեցէք եւ այլն։

ԽԱՌՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՆԻ ՄԷՋ

B. Lokal Anzeiger թերթին քանի մը օր առաջ հրատարակած տեղեկութիւններուն համաձայն, Վանի մէջ մեծ խռովութիւններ տեղի ունեցեր են։ Ընդհանուր խուզարկութիւն կատարւած է հայ յեղափոխական Տէրոյեանը ձերբակալելու համար, որ կը կարծւի թէ քաղաքին մէջ կը գտնւի։ Այդ նպատակով քաղաքէն դուրս հանած են հայ փախստականները (շրջակայքէն եկած գաղթականներ)։ Վանի առաջնորդը միջամտեր է, բայց ապարդիւն, ուստի հրաժարական է տուեր։ Վալիի օգնականին՝ Օհաննէս Ֆէրիդի միջամտութեամբ 8 օրւան ժամանակ տրւած է Տէրոյեանը կառավարութեան յանձնելու։

* Վերջին պահուն կը ստանանք Վասպուրականի Կ. Կոմիտէի մէկ նամակը այդ անցքերուն վերաբերեալ. ուշ հասնելուն՝ կը հրատարակենք յաջորդ թւով։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Դրաբերդի Կոմիտէն ներկայիս յայտնում է իգիտութիւն հայ հասարակութեան և դաշնակցական բոլոր գործիչների, որ 1897 թ. յունիս 10-ից իվեր իսպառ խզել է իր յարաբերութիւնները Զալլադի (Տացու, Ղահրաման, Երեւանդ) և Հաջի Նազիկի հետ։ Սրանք ոչ մի կապ չունենալով այլևս վերոյիշեալ մարմնի հետ, խնդրում է ոչ յարաբերութիւն ունենալ հետները, իբրև դաշնակցականի, և ոչ էլ նպաստ տալ յանուն Դաշնակցութեան։

ՎՐԻՊԱԿ

Դրօշակի անցեալ տարւան № 15-ի մէջ սխալմամբ Ուստրի և Նիւ-Եօրքի Կոմիտէներու անունով հրատարակւած են Հր. Ամերիկա խրկւած դաշնակցականներուն ինպաստ հաւաքւած գումարները։ Այդ հանգանակութիւնը կատարւած է յատուկ այդ նպատակով կազմւած Նիւ-Եօրքի յանձնաժողովին ձեռքով։

* Նոյն № -ին Նաւահանգիստ Կոմիտէի ցուցակին մէջ ծ ա հ ա ն ա խմբից— ուղղել ծ ի ա ծ ա ն խմբից։ Փոքր Պետս 5 ռ. ուղղելի 15 ռ. Նոյն ցուցակի Գաղթավայրի բաժնին մէջ ծաղկածորից Խ ա լ ք ի ս 25 ռ.— ուղղելի Խ ա չ ի կ ե ա ն 25ռ.

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)